

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ (ՀՈԴՎԱԾ ԱՌԱՋԻՆ)

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

Հոդվածը նվիրված է հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կոմիտաս վարդապետի՝ ռուսական մշակույթի հետ ունեցած առնչություններին:

Հոդված - ռուսումնասիրության նախաբանում ներկայացվում են հայ-ռուսական դարավոր պատմամշակութային կապերը, ռուսական երաժշտական արվեստի նշանակությունը XIX դարի վերջի և XX դարի սկզբի արևելահայ կոմպոզիտորների գործունեության համար: Առաջին անգամ ժամանակաշրջանի պատմաքաղաքական համատեքստում հնարավոր ամբողջությամբ քննվում են Կոմիտաս վարդապետի գիտական կենսագրության՝ ռուսական մշակույթին առնչվող փաստերը, նրա արվեստին տրված ռուս ականավոր երաժշտագետների մասնագիտական գնահատականներն ու կարծիքները:

Վարդապետն էջմիածնում, Անդրկովկասում և Եվրոպայում ծավալել է ստեղծագործական և երաժշտագիտական գործունեություն, որին անդրադարձել են ռուսական մշակույթի հեղինակավոր ներկայացուցիչներ Թ. Հարթմանը, Ն. Չերեպինը, Մ. Գնեսինը, Դ. Մազգիդը, Վ. Կորգանովը, Դ. Շոստակովիչը: Անդրկովկասի ռուսալեզու մամուլը բարձր է գնահատել Կոմիտասի երաժշտալուսավորական առաքելությունը, հրապարակումներին արձագանքել է պետերբուրգյան մամուլը: Վարդապետի համերգ-դասախոսությունները Թիֆլիսում, Բաքվում ընթացել են աննախադեպ հաջողություններով: Այս փաստերի համակողմանի ու նորովի դիտարկմամբ ամբողջանում են Կոմիտաս վարդապետի կատարած գործի դերն ու նշանակությունն ազգային մշակույթի համար:

Քանալի քառեր – Կոմիտաս վարդապետ, երաժշտական մշակույթ, ռուսական երաժշտություն, երաժշտագետ, կոմպոզիտոր:

Հայ-ռուսական պատմամշակութային և հոգևոր առնչությունները, ձևավորվելով դեռևս միջնադարում, անցել են դարերի փորձություն: Հայոց առաջին կաթողիկոս Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը դեռ հնուց է եղել Ռուսաստանում: Մոսկվայի Կարմիր հրապարակում՝ Բարսեղ Երանելու տաճարի համալիրի մեջ, ավելի քան հինգ դար կանգնած է Հայոց Գրիգորի եկեղեցին (Церковь Григориса Армении)՝ Երանելու տաճարի գմբեթին կից վեր խոյացող գմբեթով. կառուցվել է Իվան Ահեղի հրովարտակով¹:

¹ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», Հանրագիտարան, Երևան, 2002, էջ 226:

Հայ-ռուսական կապերն ավելի ամրապնդվեցին XIX դարում, երբ 1828 թ. Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին: Հայկական մշակույթն ապրեց զարգացման ու վերելքի բուռն շրջան. ստեղծվեցին հայ մշակութային և կրթական օջախներ ոչ միայն Հայաստանում, այլև Ռուսաստանի և Անդրկովկասի հայաշատ քաղաքներում՝ Մոսկվայում, Աստրախանում, Ղրիմում, Թիֆլիսում և Բաքվում: Այսօր էլ Ռուսաստանի տարածքում գործում են ճարտարապետական ինքնատիպ լուծումներով աչքի ընկնող բազմաթիվ հայկական եկեղեցիներ ու դպրոցներ²: Իրենց լուսավորական գործունեությամբ առանձնանում էին Մոսկվայի Լազարյան ճեմարանը, Աստրախանի Աղաբաբյան դպրոցը, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Էջմիածնի Գևորգյան ճեմարանը:

XIX դարի վերջերին և XX դարի սկզբին հայ երաժշտական մշակույթի համար ռուսական առաջադիմական արվեստի հսկայական դերն անուրանալի իրողություն է: Սանկտ Պետերբուրգի և Մոսկվայի կոնսերվատորիաներում մասնագիտական կրթություն են ստացել հայազգի նշանավոր կոմպոզիտորներ Մակար Եկմալյանը (1856-1905), Ալեքսանդր Սպենդիարյանը (1871-1928), Ռոմանոս Մելիքյանը (1883-1935), երաժշտագետ Բարսեղ Ղորղանյանը (Վասիլի Կորգանով, 1865-1934), երաժիշտ կատարողներ Նադեժդա Պապայանը, Բեգլար Ամիրջանյանը, Հովհաննես Նալբանդյանը³: Ի դեպ, Բ. Ղորղանյանն⁴ առաջին երաժշտագետներից էր, ով նկատել է երիտասարդ Շայապինի տաղանդը, լուսաբանել «Պուշկինը երաժշտության մեջ» թեման: Երաժշտության պատմության մեջ հայտնի է Սպենդիարով-Գորկի ստեղծագործական համագործակցությունը⁵: Այդպիսի բազում օրինակներ կան ընդհուպ

² 10-րդ դարից հայ սրբեր Գրիգոր Լուսավորչի և Հռիփսիմեի պաշտամունքը տարածում է գտել ռուսական եկեղեցիներում, օր.՝ Նովգորոդի Սպաս Ներեդիցա տաճարի (1198) ինտերիերի որմնանկարներում: Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 10, Երևան, 1984, էջ 73:

³ Տե՛ս **Աղայան Ա., Ասատրյան Ա.**, Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից, Սանկտ-Պետերբուրգ, Երևան, 2015:

⁴ Բ. Ղորղանյանը 1900-ից Անդրկովկասում հիմնադրել է «Кавказский вестник» գիտագրական ամսագիրը: Լուսաբանել է Կովկասի մշակութային կյանքը: 1902-ին հրապարակված Բեթհովենի մասին ռուսերեն մենագրությունն առաջին լուրջ ուսումնասիրությունն էր՝ հիմնված նամակագրության և այլ փաստերի վրա: Կորգանովը հայ մեծ բարերար, Ռուսական կայսրության մեջ հայտնի արդյունաբերող Ա. Մանթաշյանցի փեսան էր, որի հովանավորությամբ է Կոմիտասը ուսանել Գերմանիայում:

⁵ 1902-ին Ղրիմում Մ. Գորկին, հանդիպելով Ա. Սպենդիարյանին, նրան է հանձնել

մինչև XX դար⁶:

XX դարում Մոսկվայում էր զարգանում հայ մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի տաղանդը: Մայրաքաղաքում գործող Հայ արվեստի տունը կարևոր ազդեցություն ունեցավ «Հայկական հնգյակի»⁷ կոմպոզիտորների մասնագիտական կատարելագործման վրա:

Հայոց հոգևոր կյանքում բացառիկ դեր և նշանակություն ուներ մեծանուն Կոմիտաս վարդապետը, ում կենսագրությունն անքակտելիորեն կապված է սեփական ժողովրդի պատմությանը: Նրա ճակատագիրը, սակայն, առ այսօր մեր առջև դնում է բարդ ու հետաքրքիր խնդիրներ: Հանճարեղ գեղարվեստագետի կյանքի փառքի ու ողբերգության բազում էջեր պարուրված են խորհրդավորության շղարշով: Կիսելով սեփական ժողովրդի ճակատագիրը՝ նա ևս իր ողբերգական վախճանն ունեցավ Հայոց Մեծ եղեռնից հետո:

Ժամանակի ընթացքում անհրաժեշտություն են դարձել Կոմիտասի կյանքի թվացյալ կամ «հայտնի» փաստերի նորովի մեկնաբանությունը, գիտական կենսագրության առավել խոր ու բազմակողմանի ուսումնասիրությունը:

Մեծ արվեստագետի կյանքն ու գործունեությունը սերտորեն կապված էին և անբաժանելի համաշխարհային մշակույթի և մասնավորապես ռուսական մշակույթի նվաճումներից:

Խորհրդային շրջանում տարբեր շեշտադրումներով են լուսաբանվել Ռուսաստանի հետ Կոմիտասի առնչությունները: Հայտնի են հիմնականում ռուս երաժիշտներ Թոմաս Հարթմանի (1885-1956) և Միխայիլ Գնեսինի

«Ձկնորսը և փերին» երկը, որը դարձել է Սպենդիարյանի երաժշտական բալլադի հիմնանյութը: Ռուս կոմպոզիտոր Ա. Չերեպինը ևս բարձր է գնահատել Սպենդիարյանի արվեստը՝ իր երաժշտության մեջ ընդունելով հայ կոմպոզիտորի ազդեցությունը:

⁶Հայտնի է նաև ռուս կոմպոզիտոր Գեորգի Սվիրիդովի «Հայրերի երկիր» վոկալ շարքը՝ Ա. Խահակյանի խոսքերով, Ս. Ռախմանինովի «Գիշերն իմ այգում» ռոմանսը՝ դարձյալ Ա. Խահակյանի խոսքերով (Ա. Բլոկի թարգմանությամբ), ինչպես նաև հայ միջնադարյան տաղերգու Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի (թարգմ.՝ Ն. Գրեբնյով) հիման վրա խառը երգչախմբի համար Ա. Շնիտկեի հեղինակած խմբերգային կոնցերտը, որի գաղափարը տվել է հայ անվանի կոմպոզիտոր, Ա. Շնիտկեի մտերիմ ընկեր Տ. Մանսուրյանը:

⁷ Առնո Բաբաջանյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Էդվարդ Միրզոյանը, Ղազարոս Սարյանը և Ադամ Խուրդյանը «Հայկական հնգյակի» անդամներ էին կոչվում ռուսական «Հզոր խմբակի» օրինակով (անդամներն էին Մ. Բալակիրը, Յ. Կյուին, Ա. Բորոդինը, Մ. Մուսորգսկին և Ն. Ռիմսկի-Կորսակովը):

(1883-1943) արժեքավոր հուշագրությունները նրա մասին⁸:

Հայ գրող, հրապարակախոս Դերենիկ Դեմիրճյանը (1877-1956), անդրադառնալով Կոմիտասին, կոմիտասագիտության հիմնախնդիրներին, 1956-ին գրում էր. «...մտահոգության առարկա է դարձել Կոմիտասի՝ դեպի ռուսական երաժշտությունն ունեցած առնչությունների համար նյութ գտնելու հարցը: Ապրելով և ստեղծագործելով նախկին Ռուսաստանում, նա (Կոմիտասը – Լ.Ս.) չէր կարող վերաբերմունք և տեսակետ չունենալ դեպի ռուսական երաժշտությունը... Մենք ունենք ընդարձակ նյութ այն մասին, որ Փարիզում և Պոլսում նա սերտ հարաբերություն ուներ ռուսական երաժշտության հետ, մեծապես գնահատում էր «Հզոր հնգյակը», գրի էր առնում ռուս ժողովրդական երգերը: ...Գնեսինի հետ ծանոթությունը, Արենսկու և Տանենկի արժանավոր աշակերտ Հարտմանի հեղինակավոր կարծիքները և մասնագիտական գնահատությունները, նմանապես մեր մեծատաղանդ երաժշտի հմայքի ու գործունեության հանդեպ հայ և օտար հասարակության ցուցաբերած հիացքն ու սերը միանգամայն վկայում են նրա երաժշտության մեծ արժեքն ու նշանակությունը»⁹:

Մեր հոդվածի շրջանակներում առաջին անգամ պատմաքաղաքական տեսանկյունից հնարավոր ամբողջությամբ մեկտեղելու և դիտարկելու ենք Կոմիտաս վարդապետի գիտական կենսագրության, այսպես ասած, «ռուսական» շրջանը, ինչն, անշուշտ, նոր լույս կսփռի Կոմիտաս վարդապետի պատմական դերի ճշմարտացի գնահատականի վրա¹⁰:

Արդի երաժշտագիտության մեջ առկա է Կոմիտասի կյանքն ու ստեղծագործությունը լուսաբանող պատկառելի գրականություն¹¹:

Կոմիտաս վարդապետը հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրն է, բազմաբեղուն երաժիշտ, կոմպոզիտոր, բանահավաք, երաժըշ-

⁸ Գասպարյան Ս., Կոմիտաս, Երևան, 1947: Յոլյան Ի., Կոմիտաս, Երևան, 1969: Գյոդակյան Գ., Կոմիտաս, Երևան, 1969: Шавердян А., Комитас и армянская музыкальная культура, Ереван, 1956.

⁹ Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Երևան, 1960, էջ 5: Դերենիկ Դեմիրճյանը 1892-ին ուսանել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, մասնակցել Կոմիտասի երգչախմբային դասերին: Դեմիրճյանին է պատկանում Ն. Գոգոլի «Մեռած հոգիներ» վեպի առաջին հատորի հայերեն թարգմանությունը:

¹⁰ Տե՛ս Սահակյան Լ., Կոմիտաս վարդապետը և ֆրանսիական մշակույթը, «Կանթեղ», Գիտական հոդվածներ, N3 (68), Երևան, 2016, էջ 242-263: Մեզ համար առանձին ուսումնասիրության նյութ է նաև վարդապետի կյանքի՝ Պոլսի հետ կապված շրջանը:

¹¹ Նույնի՝ Կոմիտասագիտությունը հայ երաժշտագիտության մեջ, Երևան, 2010, էջ 145-167:

տագետ, խմբավար, երգիչ ու մանկավարժ: Նա կորստից փրկել և գիտականորեն ուսումնասիրել է հայ երաժշտության շատ գանձեր, հաստատել հայ ինքնուրույն երաժշտության գոյության փաստը: Իր երկարատև, հիմնավոր հետազոտություններով Կոմիտասն ապացուցեց հայ երաժշտարվեստի կարևորագույն առանձնահատկությունները, նրա հնադարյան ծագումն ու զարգացման ինքնատիպությունը: Նա նաև եվրոպական ու արևելյան երաժշտության գիտակ էր, որի հետաքրքրությունների տեսադաշտում էին XX դարի սկզբի համաշխարհային երաժշտության նորահունչ միտումները, ինչպես նաև Եվրոպայի համար հայտնություն դարձած ռուսական երաժշտական մշակույթը:

Կոմիտաս վարդապետը ծնվել է 1869-ին Փոքր Ասիայի Բյոթահիա քաղաքում: Ուսանել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, այնուհետև Բեռլինի Ռ. Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում և «Վիլհելմ Ֆրիդրիխ» Արքունական համալսարանում (այժմ՝ Հումբոլդտ համալսարան): Նա գիտական և լուսավորական բոլոր գործունեություն է ծավալել Անդրկովկասի, Եվրոպայի և Մերձավոր Արևելքի քաղաքներում ու մշակույթային կենտրոններում: Վարդապետի բանահավաքչական և գիտական աշխատանքները մեծ մասամբ իրականացվել են Արևելյան Հայաստանում, որը XX դարի սկզբին Ռուսական կայսրության մի մասն էր¹², նաև Անդրկովկասի մշակույթային կենտրոններ Էջմիածնում, Երևանում, Թիֆլիսում, Բաքվում, որտեղ մեկտեղված հայ և օտարազգի մտավորականները ոգեշնչվում էին ռուսական մշակույթի առաջադեմ, լուսավորական գաղափարներով: Վարդապետի ստեղծագործական գործունեությունը նաև ռուս առաջադեմ մտավորականների ուշադրության կենտրոնում էր: Նա ժամանակի ուսյալ արվեստագետներից մեկն էր, որը տիրապետում էր նաև գերմաներենին, ֆրանսերենին, ռուսերենին: Ի դեպ, Գևորգյան ճեմարանում Կոմիտասը ռուսաց լեզու սովորել է հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանից (1864-1929), որը, նկատելով Կոմիտասի՝ երաժշտության հանդեպ ունեցած բացառիկ ընդունակությունները, Ռուսաստանից բերել է տալիս երաժշտական դասագրքեր¹³: Հոգևոր ճեմարանում ռուս գրականություն և պատմություն է ուսանել հայտնի բանասեր, պատմաբան Ստեփան Լիսիցյանի (1865-1947) դասարանում:

Շրջելով աշխարհի տարբեր երկրներում, հստակ գիտակցելով իր ապ-

¹² «Հայկական սովետական հանրագիտարան», Երևան, 1984, հ. 10, էջ 36:

¹³ Թերլեմեզյան Ռ., Կոմիտաս, Երևան, 1992, էջ 14:

րած բարդ ժամանակաշրջանն ու իր առաքելությունը՝ Կոմիտասը հայերի ճակատագիրը կապում էր Ռուսաց կայսրության հետ. «Չը պէ՛տք է բաժնունք. չը պէ՛տք է խաբունք Եւրոպայի զանազան խոստումնալից խաբկանքներէն. միանալու ենք եւ գործնական ճամբան բռնելու. ըստ իս, առաջին քայլն է բոլոր հայութիւնն ամփոփել Ռուսի իշխանութեան տակ...Ես վախ չունեմ, թէ ռուս կառավարութեան մէջ կը հալենք, որքան ալ որ հալենք, այնուամենայնիւ մեր ինքնագիտակցութիւնը զարթնած է եւ եթէ խելօք շարժուենք կը վաստկենք. ես այս կարծիքն ունեմ»¹⁴: Վարդապետի նամականու մեջ տեղ են գտել նաև ռուսերենով հեռագրեր ու նամակներ¹⁵:

Կոմիտասի գործունեության առաջին լուրջ գնահատականները տվել են ռուսական մշակութային գործիչները¹⁶: Իր «Կոմիտասի ոճը և քսաներորդ դարի երաժշտությունը» արժեքավոր հոդվածում երաժշտագետ Գևորգ Գյոդակյանը գրում է. «1919-ին Թիֆլիսում պրոֆեսոր Հարթմանի նշանավոր ելույթից հետո, որ «հայտնագործեց» (մասնավորապես «արևելահայերի» համար) Կոմիտաս կոմպոզիտորին, թերևս ոչ ոք այլևս չիորձեց վիճարկել նրա բացառիկ դերը հայ պրոֆեսիոնալ երաժշտության ազգային ոճի ձևավորման մեջ»¹⁷:

Վարդապետի գործի գնահատության մեջ Թ. Հարթմանի կարևոր գնահատություններին մանրամասն կանդրադառնանք մեր հաջորդ շարադրանքում: Փորձենք փաստերը դիտարկել ըստ ժամանակագրության:

Իր գիտակցական կյանքի մի զգալի հատված Կոմիտասն ապրել է Արևելահայաստանում կամ Հայաստանի ռուսահպատակ հատվածում, և ինչպես վերևում նշեցինք, նրա «ծանոթությունը» ռուսական մշակույթի հետ սկսվել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, շարունակվել Անդրկովկասի հայաշատ քաղաքներում՝ Թիֆլիսում, Բաքվում, որտեղ գործում էին հայկական եկեղեցիներ, մշակութային միություններ, դպրոցներ, թատրոններ, պարբերական մամուլ¹⁸: Չնայած լուսավորական հաստատությունների առա-

¹⁴ Տե՛ս Կոմիտաս Վարդապետ, Նամականի, Երևան, 2009, էջ 216:

¹⁵ Նույն տեղում, էջ 219, 243, 244:

¹⁶ Կոմիտաս վարդապետի գործի գնահատության մեջ կարևորում ենք նաև ժամանակակիցների՝ Շ. Պերպերյանի, Ս. Մելիքյանի, Վ. Կորգանովի վերլուծական հոդվածները:

¹⁷ Տե՛ս Գյոդակյան Գ., Կոմիտասի ոճը և քսաներորդ դարի երաժշտությունը, Կոմիտասական, հ. 1, Երևան, 1969, էջ 84:

¹⁸ Դարասկզբին Թիֆլիսում հրատարակվում էին հայալեզու «Մշակ», «Նոր Դար», «Հասկեր», «Գեղարուեստ», «Հորիզոն», «Սուրհանդակ», ռուսալեզու «Новое обозрение», «Новая речь», «Тифлисский листок», «Закавказье» լրագրերը, «Տարազ» շաբաթաթերթը,

տության՝ ցարական իշխանությունները վերահսկում էին Անդրկովկասի մշակութային կյանքը: Օրինակ, երբ 1906-ին Կոմիտաս վարդապետը Գարեգին Լևոնյանի հետ մտադրվել էր Վաղարշապատում հրատարակել «Գեղարուեստ» գրական-գեղարվեստական հանդեսը, Երևանի նահանգապետից ստանում է մերժում այն պատրվակով, որ Վաղարշապատը քաղաք չէ, և Անդրկովկասի գյուղերում հանդեսներ չեն հրատարակվում: Հավելենք, որ, ըստ նահանգապետի, Կոմիտասը «ռուսահպատակ» չէր, և բացատրության մեջ նաև գրված էր. «Խմբագիրներից մեկը՝ Կոմիտաս Գևորգյանը¹⁹, ռուսահպատակ չէ, իրավունք չունի այդ պաշտոնին հաստատվելու»²⁰: Կոմիտաս վարդապետը՝ որպես «թրքահպատակ», մշտապես գտնվում էր Էջմիածնի միաբանության «ռուսահպատակ կղերականության ուշադրության կենտրոնում»²¹: Իր հերթին Հայ առաքելական եկեղեցին ևս, որը պետականություն չունեցող հայ ժողովրդի միակ հոգևոր և կրթական օջախն էր, ցարական կառավարության ուշադրության կենտրոնում էր: 1907-ին՝ Խրիմյան Հայրիկի մահվանից հետո, սրվեց հակահայկական քաղաքականությունը, և յուրաքանչյուր «այլախոհ» ճեմարանական հետապնդվում ու հալածվում էր: Կոմիտասի «ազատ» լուսավորական գործունեության հանդեպ կղերականության ռուսահպատակ հատվածի հետապնդումներն ու սահմանափակումները ժամանակի ընթացքում առավել մեծ թափ ստացան: Մայր աթոռը լքեցին կամ ակտիվ գործունեությունից մեկուսացվեցին Գարեգին Լևոնյանը (1872-1947), Երվանդ Տեր-Մինասյանը (1879-1974), Գարեգին Հովսեփյանը (1867-1952), Կարապետ Տեր-Մկրտչյանը (1866-1915): 1910-ից Էջմիածինը լքեց նաև Կոմիտաս վարդապետը:

Հայտնի է, որ 1893-ին՝ Էջմիածնի հոգևոր ճեմարանն ավարտելուց հետո, Կոմիտաս վարդապետը ծրագրում էր կատարելագործել իր ընդհանուր և երաժշտական գիտելիքները: 1895թ. նա երաժշտական մասնագիտական համակողմանի կրթություն ստանալու նպատակով մեկնում է Անդրկովկասի մտավորականության կենտրոն՝ Թիֆլիս՝ դասեր առնելու հայ անվանի կոմպոզիտոր, Պետերբուրգի կոնսերվատորիայի շրջանավարտ, Ռուսական կայսերական երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի ղեկավար Մա-

Բաբլում՝ «Ջանգ» շաբաթաթերթը, «Бакы» թերթը և այլն:

¹⁹ Գևորգյան հոգևոր ճեմարանը համարելով իր Alma Mater-ը՝ Կոմիտաս վարդապետը «Գևորգյան»-ը որոշ ժամանակ որդեգրել էր որպես իր ազգանուն: Չի բացառվում, որ կարող էր օգտագործել հոր՝ Գևորգ Սողոմոնյանի անունն իբրև ազգանուն:

²⁰ Տե՛ս Լևոնյան Գ., Մեր Կոմիտասը, «Կոմիտաս» ժողովածու, Երևան, 1930, էջ 83:

²¹ Մասնավորապես կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցի:

կար Եկմայանի մոտ²²։ Անտարակույս է, որ դասական հարմոնիայից բացի, Եկմայանը Կոմիտասին հնարավորինս ծանոթացնում էր ռուսական ազգային երաժշտական դպրոցի գեղարվեստական բարձր ձեռքբերումներին։ 1905-ին Թիֆլիսում Կոմիտասը ձեռք է բերում և ուսումնասիրում 1891-ին Մոսկվայում հրատարակված ռուս կոմպոզիտոր, դաշնակահար Անտոն Արենսկու (1861-1906) «Краткое руководство к практическому изучению гармонии», ինչպես նաև Պետերբուրգում 1883-ին լույս տեսած ռուս կոմպոզիտոր և մանկավարժ Անդրեյ Կազբիրյովի (1845-1885) «Руководство к практическому изучению гармонии», ռուս կոմպոզիտոր ու խմբավար Վասիլի Օռլովի (1858-1901) «Искусство церковного пения» աշխատությունները²³։ Հետագա տարիներին նրա սեղանի գիրքը դարձավ հայտնի կոմպոզիտոր, երաժշտահասարակական գործիչ, մանկավարժ Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովի (1844-1908) «Практический учебник гармонии» ձեռնարկը։

Կոմիտասը մտադրություն ուներ սովորել Պետերբուրգի կոնսերվատորիայում, ծրագրել էր հետագայում հայ ուսանողների համար Թիֆլիսում կոնսերվատորիա բացել, սակայն հանգամանքների բերումով և հայ եկեղեցական գործիչ Մաղաքիա Օրմանյանի (1841-1918) խորհրդով նա ընտրում է Գերմանիայում ուսանելը²⁴։

Ժողովրդական երգամտածողության հիմքով XIX դարում բուռն ծաղկում ապրող ռուսական երաժշտությունը, ազգային կոմպոզիտորական դպրոցի իր խոշորագույն ներկայացուցիչներով, չէր կարող վրիպել հզոր ինտուիցիայով օժտված երաժիշտ և գիտնական Կոմիտասի տեսադաշտից։ 1890-ականներից Կոմիտաս վարդապետը հայ, արևելյան և եվրոպական երաժշտությանը զուգահեռ գիտականորեն ուսումնասիրում է նաև ռուսական երաժշտական հարուստ մշակույթը։ XX դարի սկզբին ռուս երաժշտության հսկայական ազդե-

²² Մ. Եկմայանը Պետերբուրգում ուսանել և ստեղծագործական շփումների մեջ է եղել ռուս մեծանուն երաժիշտներ Ն. Ռիմսկի-Կորսակովի, Ն. Սոլովյովի, Պ. Չայկովսկու, Ա. Ռուբինշտեյնի, Ա. Լյադովի հետ։

²³ **Սամվելյան Խ.**, Կոմիտասի կյանքի և գործունեության համառոտ տարեգրություն, «Սովետական արվեստ», 1969, N 11, էջ 56։

²⁴ Հայ եկեղեցական անվանի գործիչ, աստվածաբան Մաղաքիա Օրմանյանը 1887-ին դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում։ Օրմանյանի միջնորդությամբ եվրոպական համալսարաններում իրենց կրթությունն են շարունակել ճեմարանական իր սաները՝ Կոմիտաս վարդապետը, Գարեգին Հովսեփյանցը (1867-1952, հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս), Գևորգ Զ Չորեքչյանը (1868-1954, հետագայում՝ Ամենայն հայոց 129-րդ կաթողիկոս)։

ցությունը երաժշտարվեստի վրա անուրանալի և բազմիցս արձանագրված փաստ է: Կոմիտաս վարդապետը քաջաճանոթ է եղել այդ երաժշտությանը, ռուս կոմպոզիտորների՝ ազգային-ժողովրդականի վրա խարսխված լադակա-ռուցողական նորարարական սկզբունքներին: Կան բազմաթիվ փաստեր, թե ինչպես էր Վարդապետը Փարիզում կամ Կ. Պոլսում մասնակցում և կամ էլ ունկնդրում «Ռուսաց» համերգները: Հայտնի են վարդապետի ելույթները Փարիզի «Ռուսաց երեկոյթում», որտեղ նա հանդես է եկել իր նոր ձայնագրած երգերով²⁵:

1905 թ. Իսրիմյան Հայրիկին (1820-1907) Թիֆլիսից Ալեքսանդրապոլ մեկնող գնացքով ուղեկցում էր Կոմիտաս վարդապետը: Ճամփորդության ընթացքում խոսելով տարբեր ազգերի երաժշտարվեստի մասին՝ Վարդապետը բավական մանրամասն անդրադարձել է ժողովրդական երգերին: Նա առանձնացրել է ռուսական ազգային երգերի լայնահուն՝ հարթավայրի պես անձայրածիր բնույթն ու լադային ինքնատիպությունը: Ի հավաստումն իր ասածի՝ Հայոց կաթողիկոսի համար Վարդապետը կատարել է ռուսական երգեր²⁶:

Կոմիտասի «Լեռնային բարձունքներ» ռոմանսը գրված է Մ. Լեբմոնտովի բանաստեղծության խոսքերով: Նրա գրչին է պատկանում նաև Պ. Չայկովսկու (1840-1893) «Был у Христа-младенца сад» երգի խմբերգային տարբերակը²⁷: Փարիզում, որտեղ XX դարի սկզբին շատ բարձր էր գնահատվում ռուսական երաժշտական մշակույթը, Վարդապետն առավել բազմակողմանիորեն է ընկալում ժողովրդական հարուստ ակունքներից բխած ռուսական երաժշտարվեստը: Ինչպես ճշմարտացիորեն նշել է Կոմիտասի սան Աղավնի Մեսրոպյանը. «Կոմիտասի նախասիրությունը եղավ ռուսական ժողովրդական երգի զարմանալի պոլիֆոնիզմը: Անոր պարզ ու հստակ հնչականությունը գրավեց իր հոգին, խորապես հուզեց իր մեծ տաղանդը»²⁸: Ա. Մեսրոպյանն իր «Կոմիտաս և ռուսական երաժշտությունը» ակնարկում, անդրադառնալով Կոմիտասի՝ ռուս երաժշտության հանդեպ ունեցած վերաբերմունքին, գրում է. «Հայկական ժողովրդական երգերեն դուրս՝ Կոմիտասի ամենասիրած եղա-

²⁵ «Արարատ», Վաղարշապատ, 1907, N 10, էջ 907:

²⁶ **Бадикян Х.**, Русские ноты великого Комитаса, Голос Армении, Ер., 1999, 9 октября. «Արարատ», 1905, N 9, էջ 807:

²⁷ Տե՛ս **Հարությունյան Մ.**, Կոմիտասը ազգային և ալլազգային աղբյուրների մարմնավորող. Ավանդույթներ և արդիականություն, Հայ երաժշտության հարցեր, Երևան, 1996, էջ 236:

²⁸ Տե՛ս «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», Երևան, 1960, էջ 291:

նակները մնացին Գլինկայի «Ռուսլան և Լյուդմիլա»-ի արիաները, Մուսորգ-սկիի «Երգ լվի մասին», Ռիմսկի-Կորսակովի «Շեհերազադը» և Դարգոմիժ-սկիի «Ռուսալկա» օպերան։ Կոմիտաս բացառիկ սեր մը ուներ վերջինիս «Ջաղացպանի երգ»-ի նկատմամբ։ Ունկնդիրներու հիշողության մեջ երբեք չեն կրնար մոռցվիլ այն պահերը, երբ Կոմիտաս մտերմական հավաքույթներու ժամանակ հաճախ կանցներ դաշնամուրի առաջ և անոր մեղեդիներուն միացնելով իր քաղցրալուր ձայնի ելևէջները, խորունկ վերապրումով կդրսևորեր ռուս աշխատավոր ջրաղացպանի ներքնաշխարհը»²⁹։ Կոմիտաս վարդապետն իր գրադարանում հատուկ խնամքով առանձնացնում և ուսում-նասիրում էր ռուս դասականներ Մոդեստ Մուսորգսկու, Ալեքսանդր Բորոդինի և Ն. Ռիմսկի-Կորսակովի գործերը, իսկ իր «Նվիրական պահա-րանում» Խրիմյան Հայրիկի, Խ. Աբովյանի, Կ. Դեբյուսիի նկարների կողքին պահում էր Մ. Գլինկայի, Պ. Չայկովսկու և Մ. Գնեսինի նկարները³⁰, հավաքում և խնամքով պահպանում էր ռուս երաժշտության մասին մամուլում հրա-տարակված հոդվածները։ 1913-ին Ռուսաստանից Պոլիս ժամանած երգչա-խումբը հանդես էր գալիս Ստեփան Սմոլենսկու (1848-1908) Պատարագի կատարումով. արդապետը շատ բարձր էր գնահատում այդ գործը՝ իր աշակերտներին հորդորելով ներկա գտնվել բոլոր համերգներին։ «Կոմիտասը մեծ ոգևորություն կապրեր ամեն անգամ, – գրում է Ա. Մեսրոպյանը, – որ Ռուսաստանեն Պոլիս կայցելեին ռուսական երաժշտական կատարողական ուժեր։ Անոնցմե ամեն մեկուն հետ Կոմիտաս կձանոթանար Պոլսո հայտնի երաժշտական «Կոմանտինկել» տան մեջ... Հաճախ, երբ այդ առիթով մենք կերթայինք ռուսական եկեղեցին, դասի մեջ կտեսնեինք Կոմիտասը կանգնած իր պատվավոր տեղը, որ վերացած վիճակի մեջ կմասնակցեր երգչախմբի երգեցողության»³¹։

1909-ին հայ անվանի պետական գործիչ, գրականագետ Ալեքսանդր Մյասնիկյանը (1886-1925) նամակ է գրել Կոմիտաս վարդապետին և հայ ուսանողական միության անունից խնդրել է գալ Մոսկվա, ուսանողներից մի երգեցիկ խումբ կազմել և համերգներ տալ այդ միության օգտին³²։

Վարդապետը, պատճառաբանելով իր զբաղվածությունը, մերժել է Ա. Մյասնիկյանին։ Նույն թվականին Էջմիածնից Մոսկվա՝ Մյասնիկյանին

²⁹ Նույն տեղում, էջ 292։

³⁰ Ժամանակակիցները Կոմիտասի մասին, էջ 202։

³¹ Գլինկան և Կոմիտասը, «Սովետական արվեստ», 1957, N 2, էջ 39։

³² Ալեքսանդր Մյասնիկյանը և արվեստը, «Սովետական արվեստ», 1956, N 2, էջ 11։

հղած Կոմիտասի նամակը վարդապետի կախյալ վիճակի ևս մի փաստի վկայությունն է. «Ձեր ուզած եւ իմ ցանկացած համերգը պատուաւոր զլուխ բերելու համար անհրաժեշտ է առնուազն մէկ եւ կէս ամիս՝ գալու, գնալու եւ պատրաստելու համար. իսկ այդքան երկար ժամանակ ինձ դժուար թէ թողնեն բացակայեմ: Բայց եւ այնպէս, փորձեցէք՝ դիմեցէք պաշտօնապէս Վեհափառին, գուցէ թոյլատրում է, այն ժամանակ կը գամ. ես պատրաստ եմ ծառայելու»³³:

Այս կախյալ վիճակում ռուսական մեծ քաղաքներում դժվար էր ճանաչելի դարձնել Վարդապետի երաժշտական և գիտական ժառանգությունը:

Կոմիտաս վարդապետի տեսական աշխատությունների բավական քիչ հատված է թարգմանվել օտար լեզուներով³⁴: Ռուսական լայն լսարանի համար ևս անհայտ էր նրա գիտական ուսումնասիրությունների մեծ մասը: Նրա ժառանգության արժեքավոր հատվածն առաջին անգամ ռուսերեն թարգմանել և հրապարակել է ռուս երաժշտագիտության մեջ զգալի վաստակ ունեցող անվանի երաժշտագետ, քննադատ Վասիլի Կորգանովը:

Անդրադառնալով Կոմիտասի բանահավաքչական աշխատանքների կարևորությանը՝ Թիֆլիսի ռուսալեզու պարբերականներում Կորգանովը հանդես է եկել նրա անձն ու գործը լուսաբանող տարաբնույթ հոդվածներով: 1900-ին Թիֆլիսի «Кавказский вестник» ամսագրում նա գերմաներենից ռուսերեն է թարգմանել և հրապարակել վարդապետի «Հայկական եկեղեցական երաժշտություն» խորագրով հոդվածը³⁵: 1902-ին նույն ամսագրում Վ. Կորգանովն իր «Взгляд в нечто» հոդվածում մանրամասն դիտարկել է վարդապետի «Հայ գեղջուկ պարը» խորագրով ուսումնասիրությունը³⁶:

1904-ին իշխանուհի Մ. Թումանյանի (1870–1947) խմբագրությամբ Թիֆլիսում հրատարակվող «Новое обозрение» ռուսերեն օրաթերթի «Կովկասյան երաժշտությունը» խորագրով հոդվածում Վ. Կորգանովը գրում է. «Վերջապես, շատ տարիներ անցնելուց հետո, գտնվեց մի մարդ, որ գինված մասնագիտական կարողություններով, նվիրվեց կովկասյան երգերի ուսումնասիրությանը՝ արհամարհելով ամեն մի դժվարություն: Կոմիտասն հանդիսա-

³³ Տե՛ս Կոմիտաս վարդապետ, Նամականի, Երևան, 2009, էջ 171:

³⁴ «Die Armenische kirchenmusik» («Հայ եկեղեցական երաժշտություն»), հրապարակվել է 1899-ին Լայպցիգում: "La musique rustique Arménienne" («Հայ գեղջուկ երաժշտություն»), հրապարակվել է 1907-ին Փարիզում:

³⁵ «Кавказский вестник», 1900, N 1, с. 107.

³⁶ Նույն տեղում, 1902, N 6, էջ 32:

նում է հայկական երաժշտության առաջին ուսումնասիրողը... Նրան քաջալերող ծառայած պիտի լիներ ոչ թե նրան, այլ գեղարվեստին և ամբողջ մարդկության»³⁷:

Երկու արվեստագետների՝ Կոմիտասի և Կորգանովի բարեկամության վկայությունն է 1904-ին անվանի երաժշտագետին հղած Վարդապետի նամակը՝ հետևյալ վերջաբանով. «Ուրախությամբ սպասում եմ Ձեզ սեպտեմբերին, Յարգանքներով միշտ պատրաստ Ձեզ ծառայելու Ձեր անձնուէր, խոնարհ ծառայ Կոմիտաս վարդապետ»³⁸:

Ժամանակի ընթացքում Վ. Կորգանովը դարձել է նաև Կոմիտասի առաջին քննադատներից: Իր «Կոմիտաս Գևորգյան» վերնագրով հոդվածում, անդրադառնալով Կոմիտասի փարիզյան ելույթներին և մասնավորապես «Հայ քնարի» հրատարակությանը, Վ. Կորգանովը գրել է. «Կոմիտաս վարդապետը չպետք է հրատարակեր այդ ժողովածուն, որ երաժշտական ու գիտական տեսակետից ունի ավելի շատ բացասական, քան դրական նշանակություն»³⁹:

Զխորանալով կոմիտասյան մշակումների գեղարվեստականության մեջ՝ Կորգանովը նսեմացնում է դրանց արժանիքները: Երաժշտագետը պնդում է, որ ժողովրդական երգը, «հում նյութը» պետք է տպագրել այնպես, ինչպես երգում է ժողովուրդը: Ըստ նրա՝ մշակումը չի կարող վերարտադրել բնական երգի իսկական արտահայտչականությունը. «Я настаивал и настаиваю на желательности издания народных напевов в подлинном, аутентичном виде»⁴⁰: Կորգանովը գտնում էր, որ Կոմիտասի հետազոտությունները պիտի հրապարակվեն ռուսերեն և հայերեն, քանզի դրանք ավելի շատ հետաքրքրում են հայերին և ռուսներին, այլ ոչ թե ֆրանսիացիներին և գերմանացիներին⁴¹:

1905-ին Կոմիտաս վարդապետը Թիֆլիսի Հովնանյան դպրոցում կարդում է դասախոսություն հայ ժողովրդական և եկեղեցական երաժշտության մասին: Դրան հաջորդում է Թիֆլիսի Արտիստական ընկերության համերգը, որն իր աննախադեպ հաջողությամբ դառնում է մշակութային մեծ իրադարձություն: Թիֆլիսի հայալեզու և ռուսալեզու մամուլը հիացական կարծիքներ է հայտնել Կոմիտասի մասին մասնավորապես արվեստի ու հայ երաժշտության մասին ընդհանրապես: Եվրոպական շրջագայություններից հետո՝ 1908-ին,

³⁷ Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Երևան, 1960, էջ 15:

³⁸ Տե՛ս **Կոմիտաս Վարդապետ**, Նամականի, Երևան, 2009, էջ 85:

³⁹ Տե՛ս **Корганов В.**, Кавказская музыка, 1908, էջ 81:

⁴⁰ Տե՛ս նույն տեղում:

⁴¹ **Корганов В.**, Еще о кавказской музыке, Тифлис, 1907, N 292, с. 7-8.

Անդրկովկասի մյուս հայաշատ կենտրոնում՝ Բաքվի ժողովարանի դահլիճում, Վարդապետը հանդես է եկել երկու նվագահանդեսով և ելույթ-դասախոսությամբ, որի մասին գրել է Պետերբուրգի «Русская музыкальная газета» շաբաթաթերթը⁴²: Հոդվածագիրը «Лекции по музыке в России» վերնագրով հոդվածում անդրադարձել է հայ եկեղեցական երաժշտության մասին Բաքվում հրատարակված Կոմիտասի արժեքավոր ուսումնասիրությանը: Նույն շաբաթաթերթում «Музыка в провинции» ընդհանուր խորագրի տակ հրապարակվել է հաղորդագրություն ապրիլի 1-ին Կոմիտաս վարդապետի՝ Բաքվում կայանալիք համերգի վերաբերյալ⁴³:

Կոմիտասագիտության մեջ հսկայական ավանդ ունեցող երաժշտագետ, կոմպոզիտոր Ռոբերտ Աթայանը նամակագրական կապի մեջ է եղել Լազարյան ճեմարանի շրջանավարտ, ռուս արևելագետ, դիվանագետ Վլադիմիր Մինորսկու (1877-1966) հետ: XX դարի սկզբին Մինորսկին պաշտոնավարել է Իրանի և Թուրքիայի ռուսական դեսպանություններում: Ուսումնասիրել է Պարսկաստանի և Անդրկովկասի պատմաաշխարհագրությունն ու մշակույթը: Նա Հայ դատը պաշտպանող ռուս այն դիվանագետն էր, որը հանդես էր գալիս հայանպաստ քաղաքական հայտարարություններով: Մասնավորապես դատապարտում էր Մեծ Բրիտանիայի Արտաքին գործոց նախարար Էռնեստ Բևինսին՝ Թուրքիայի առաջին նախարար Սարաջոլլուի հայատյաց քաղաքականության շուրջ համագործակցելու համար: Հիշեցնելով Հիտլերի հայտնի խոսքերը⁴⁴ և երիտթուրքերի վայրագությունները՝ ռուս մտավորականը հակադարձում էր անգլիացի պաշտոնյայի այն հայտարարությանը, թե Ղարսում և Ադանայում հայեր չեն եղել:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Վ. Մինորսկին ապրել է Փարիզում, 30-ականներին՝ Անգլիայում: Նա եվրոպական մի շարք հեղինակավոր համալսարանների պատվավոր անդամ էր, Լոնդոնի համալսարանի պրոֆե-

⁴² «Русская музыкальная газета», 1908, N 17, с. 414. Պետերբուրգյան հեղինակավոր ամսագիր է, որը հրատարակվել է 1894-1918 թթ., լուսաբանել է ռուսական և համաշխարհային մշակույթի արժեքավոր իրադարձությունները: **Դեմուրյան Ս.**, Կոմիտաս Գևորգյան, «Կոմիտաս» ժողովածու, Երևան, 1930, էջ 93-95:

⁴³ «Русская музыкальная газета», с. 422.

⁴⁴ «Ո՞վ է այսօր խոսում հայերի բնաջնջման մասին», – ասել է Հիտլերը 1939-ին՝ Լեհաստանի վրա հարձակվելուց մեկ շաբաթ առաջ: Տե՛ս **Բարդակչյան Գ.**, Հիտլերը և Հայոց ցեղասպանությունը, Զորյան ինստիտուտ, Մասաչուսեթս, 1986:

սոր: Տիրապետում էր մի քանի լեզուների, այդ թվում՝ քրդերենին. ի դեպ, նրան հիացրել էին Կոմիտաս վարդապետի քրդական երգերի կատարումները:

1912-ից Մինորսկին աշխատել է Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանությունում, մտերիմ է եղել Կոմիտասի հետ: Գրեթե միշտ նա ներկա է եղել Վարդապետի՝ Կ. Պոլսում կայացած համերգներին, իր հուշագրություններում անդրադարձել է այդ նվագահանդեսներին: Հակիրճ ու բովանդակալից նամակներում ռուս գիտնականն առանձնակի ջերմությամբ ու անմիջականությամբ նկարագրել է «Մեծ արտիստին»՝ ներկայացնելով նաև այն մթնոլորտը, որով պարուրված էին կոմիտասյան համերգները: Կարևոր է, որ իսկական մտավորականի խորաթափանցությամբ նա արժևորել է Կոմիտաս վարդապետի գործունեության նշանակությունը համաշխարհային երաժշտական մշակույթի համատեքստում: Վ. Մինորսկու հուշերից Ռ. Աթայանը պատահիկներ է հրապարակել «Литературная Армения»⁴⁵ ամսագրում: Կոմիտասի կատարումն ունկնդրելուց հետո ռուս դիվանագետը գրել է. «После концерта я пошел приветствовать Комитаса и пригласил его к себе в посольство. Тут он, увидя мое искреннее внимание, сам пел, аккомпанируя себе на рояле, и был еще сердечнее и ближе. Я понял всю важность человека, прокладывающего новые пути в области народной музыки»⁴⁶.

Կոմիտաս վարդապետի գործի ճշմարտացի գնահատության մեջ անուրանալի է նաև ռուս կոմպոզիտոր Թոմաս Հարթմանի դերը: Հարթմանը Մոսկվայի և Պետերբուրգի կոնսերվատորիաների շրջանավարտ էր, Ա. Արենսկու և Ս. Տանենի աշակերտը: 1919-1921 թթ. նա Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում վարել է կոմպոզիցիայի դասարանը, համագործակցել փիլիսոփա Գ. Գյուրջինի հետ: 1920-ականներից ապրել է Բեռլինում, Փարիզում, այնուհետև ԱՄՆ-ում: Դասավանդել է Փարիզի Սերգեյ Ռախմանինովի անվան ռուսական կոնսերվատորիայում, որի հիմնադիր-ռեկտորն էր Նիկոլայ Չերեպանինը (1873-1945): Վերջինս նույնպես Կոմիտաս վարդապետի փարիզյան համերգների երկրպագուներից էր: Ռուս կոմպոզիտոր, դիրիժոր և մանկավարժ, Պետերբուրգի կոնսերվատորիայում Ռիմսկի-Կորսակովի դասարանի լավագույն շրջանավարտ Ն. Չերեպանինը հսկայական ներդրում ունի ռուսական երաժշտական մշակույթի տարածման մեջ: Հայտնի է նրա համագոր-

⁴⁵ **Минорский В.**, Константинопольские встречи, «Литературная Армения», N 10, 1969, с. 81.

⁴⁶ Տե՛ս նշված հոդվածը, էջ 82:

ծակցությունը ռուս առաջադեմ մտավորականության հետ⁴⁷: Նրան է պատկանում Կոմիտասի երաժշտությանը տրված հայտնի գնահատականը. «Ինչպե՞ս պիտի ուրախանար Մորիս Բավելը՝ լսելով այս երկերը»⁴⁸:

Չերեպինի այս գնահատականը զետեղված է Թոմաս Հարթմանի՝ 1919-ին Թիֆլիսում կարդացած հայտնի դասախոսության մեջ (որին անդրադարձել է Գ. Գյոդակյանը):

Իր գիտական արժեքով Հարթմանի այս հոդվածը կարևոր ձեռքբերում է կոմիտասագիտության մեջ: Հարթմանն առաջիններից էր, որ կարևորեց Կոմիտաս կոմպոզիտորի դերն ու նշանակությունն ազգային երաժշտության համար: Մի իրողություն, որը, ցավոք, առ այսօր մեզանում լիովին գիտակցված չէ: Հարթմանն իր հոդված-դասախոսության մեջ ներկայացրել է Կոմիտաս վարդապետի կենսագրական փաստերն ու բազմաբեղուն գործունեության ոլորտները: Ըստ նրա՝ Կոմիտասը ժողովրդական երգի հիմքով հյուսում էր իր բազմաձայն երաժշտական կտավները: Նա Վարդապետի պոլիֆոնիկ վարպետությունը, մտածողության յուրօրինակությունը համեմատում է Վերածնության դարաշրջանի խմբերգային պոլիֆոնիայի հսկաների հետ: Հղում կատարելով իր ուսուցիչ Ս. Տանենին՝ Հարթմանը գրում է. «Նշանաւոր ռուս տեսաբան Տանենը անձամբ ինձ ասում էր, թէ այն եզրակացութեան է եկած, որ ռուս ժողովրդական երգերը պէտք է ձայն առ ձայն ոճով մշակել: Հանճարեղ Կոմիտասը, նախազգայնութեան ոյժով գործադրեց այդ ոճը եւ այնպիսի կատարելութեամբ, որ հազիւ իր արեւմտեան արուեստակիցներից մինը կարողանար իրագործել: Նրա «մշակումների» (միտումնավոր չակերտների մեջ եմ դնում), աւելի ճիշտ կը լինէր ասել, նրա քանքարաւոր խմբական երկերի մէջ ժողովրդական եղանակը պահուած է անձեռնմխելի՝ թէ չափի, թէ եղանակի

⁴⁷ Չերեպինը 1890-ականներին Ռուսաստանում ձևավորված «Мир искусства» գեղարվեստական միության գործուն անդամներից էր, 1909-ից՝ Ս. Դյագիլևի Ռուսական բալետային թատերախմբի համար երաժշտություն գրող կոմպոզիտորներից: 1917-18թթ. Ն. Չերեպինը ղեկավարել է Թիֆլիսի երաժշտանոցը, գործուն մասնակցություն ունեցել Թիֆլիսի մշակութային կյանքին:

⁴⁸ Տե՛ս **Հարթման Թ.**, Դասախոսութիւն Կոմիտասի մասին՝ կարդացուած Թիֆլիզում 1919 թուին, «Անահիտ», 1935, էջ 75-80: Այս հոդվածն առաջին անգամ հրատարակվել է Թիֆլիսի «Кавказское слово» օրաթերթում՝ 1919 թ. փետրվարի 28-ի և մարտի 1-ի համարներում: Այնուհետև Մ. Բաբայանի թարգմանությամբ այն հրատարակվել է Փարիզի «Անահիտ» հանդեսում (1935, 1936 թթ.): Տե՛ս նաև «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», Երևան, 1960, էջ 54-62:

տեսակետից: Նա ֆանատիկոս էր այդ հարցում: Ո՞վ նրանից լաւ կարող էր պաշտպանել ժողովրդական երգի հոգին»⁴⁹:

Որպէս XX դարի սկզբի նորարար, ռեալիստ՝ Հարթմանն առնչություններ է տեսել Մ. Մուսորգսկու և Կոմիտասի միջև. «Կոմիտասը համանմանութիւն ունէր Մուսորգսկու հետ-դրական (րեալ) կերպով երևակայում էր երաժշտական պատկերը»⁵⁰: Նրա այս հոդվածն առաջին լուրջ մասնագիտական ուսումնասիրություններից էր, որը հիմնավորում էր Կոմիտաս վարդապետի մեծ կոմպոզիտոր լինելը: Հարթմանն առաջինն էր, որ Վարդապետի ստեղծագործությունների մեջ արժևորեց գեղջուկ երգը բազմաձայնորեն ներդաշնակելու ինքնատիպ սկզբունքները. «Գերազանցորեն նա (Կոմիտասը – *Լ. Ս.*) գործի՛չ է, ազգագրագե՛տ, գիտնակա՞ն, թե՛ կոմպոզիտոր: Չնայած, որ Կոմիտասը երևան է եկել իբրև հեղինակ հայկական երգերի մշակումների, ես պնդում եմ, որ նախ և առաջ նա կոմպոզիտոր է: Նրա ճանապարհը միակ ճիշտ ուղին է, որ պետք է ընտրեր այդ մարդը, որ հսկայական նպատակ ուներ – գտնել այն ներդաշնակային և բազմաձայն (պոլիֆոնիկ) ոճը, որ իրենց էությամբ իսկական հայ ժողովրդական երգին համապատասխան են»⁵¹: Հարթմանը կարևորում է նաև Վարդապետի բանահավաքչական գրառումներն ու դրանց գիտական հիմնավորումները:

Կոմիտասի անձն ու գործը խորապես ուսումնասիրած և ըստ արժանվույն գնահատած Հարթմանն իր համոզիչ եզրահանգումներով հակադարձում է քննադատներին, այդ թվում և Կորգանովին՝ պնդելով, որ Կոմիտասի ազգագրական գրառումները կոմպոզիտորի գործունեության կարևորագույն հատվածն են: Նա առաջին երաժշտագետներից էր, որ կարևորեց Կոմիտասի գործի մնայուն նշանակությունը ոչ միայն հայ, այլև համաշխարհային երաժշտության համար:

Հարթմանի գործունեությունը Թիֆլիսում կապված էր երաժշտահասարակական, մշակութային կյանքին: Նա ստեղծագործական կապեր էր հաստատել Թիֆլիսի հայ մտավորականության երևելի դեմքերի՝ Հովհաննես Թումանյանի (1869-1923), Եղիշե Թադևոսյանի (1870-1936), Սպիրիդոն Մելիքյանի (1880-1933) (բոլորն էլ Վարդապետի մտերիմներն էին) հետ: 1919-ին

⁴⁹ Տե՛ս **Հարթման Թ.**, Դասախօսութիւն Կոմիտասի մասին, էջ 77:

⁵⁰ **Հարթման Թ.**, Ժողովրդական երգը եւ նրա հաւաքողները, «Անահիտ», Փարիզ, 1936, էջ 30:

⁵¹ **Հարթման Թ.**, Դասախօսութիւն Կոմիտասի մասին..., էջ 76: Տե՛ս նաև «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 55:

ռուս կոմպոզիտորը դարձել էր Թիֆլիսում կազմակերպված «Կոմիտաս» ընկերության (գործել է երկու տարի) գործուն անդամներից: Ընկերությունը ծրագրել էր համերգներ կազմակերպել, հրապարակել և պահպանել կոմպոզիտորի ժառանգությունը: Այն նպատակ ուներ անդամավճարներ հավաքելու միջոցով տարեկան որոշակի գումար հատկացնել վարդապետին⁵²:

Մեր կարծիքով Կոմիտասն, իրավամբ, մշակեց ժողովրդական երգերի ծայնագրման և դաշնավորման սեփական սկզբունքները: Նրա ազգագրական բարձրարժեք գրառումները հիմնանյութ հանդիսացան Վարդապետի գիտական հետազոտությունների և ստեղծագործությունների համար: Այդ գրառումները դարձան հայ ազգային երաժշտամտածողության ինքնատիպության ապացույցներ:

АРХИМАНДРИТ КОМИТАС И РУССКАЯ КУЛЬТУРА

Статья первая

ЛУСИНЕ СААКЯН

Данная статья посвящена взаимоотношениям основоположника армянской национальной композиторской школы Комитаса с русской культурой.

В предисловии статьи-исследования прослеживаются вековые русско-армянские культурно-исторические связи, рассматриваются роль и значение русской музыкальной культуры в творческой деятельности восточно-армянских композиторов конца 19-го и начала 20-го веков. Впервые в контексте историко-политических событий эпохи наиболее целостно изучаются факты, подтверждающие причастность творческой биографии Комитаса к русской культуре, излагаются профессиональные оценки и мнения крупнейших русских музыкантов о творчестве Комитаса.

Активная творческая и научная деятельность, которую Комитас развернул в Эчмиадзине, Закавказье и в Европе, была широко освещена авторитетными деятелями русской культуры Ф. Гартманом, Н. Черепниным, М. Гнесиным, Д. Маггидом, В. Коргановым, позже и Д. Шостаковичем. Русскоязычная пресса Закавказья высоко оценила музыкально-просветительскую миссию Комитаса; его публикации находили отклик в петербургской прессе. Лекции-концерты Архимандрита в Тифлисе, Баку проходили с

⁵² Ընկերության անդամներից էին Ե. Թադևոսյանը, Գ. Լևոնյանը, Ս. Մելիքյանը: Տե՛ս նաև **Հովհաննիսյան Թ.**, «Կոմիտաս» ընկերություն, «Գանձասար», Հալեպ, 1994, էջ 79-83: **Լևոնյան Գ.**, Մեր Կոմիտասը, «Կոմիտաս» ժողովածու, Երևան, 1930, էջ 75-88:

беспрецедентным успехом. Благодаря разностороннему изучению и новаторскому освещению этих фактов, роль Архимандрита Комитаса и его значение в национальной культуре высвечивается наиболее полно и целостно.

Ключевые слова – Архимандрит Комитас, музыкальная культура, русская музыка, музыковед, композитор.

ARCHIMANDRITE KOMITAS AND RUSSIAN CULTURE

LUSINE SAHAKYAN

The article is dedicated to the relationships of Archimandrite Komitas, the founder of the Armenian national composing tradition, with Russian culture.

The preface of the research article highlights the centuries-old Armenian-Russian historical and cultural relations, and the role Russian music played in the creative life of the Eastern Armenian composers of the late 19th-early 20th centuries. This study is the first ever attempt to comprehensively examine, within the context of the historic and political situation of the time, the connections of Komitas's works with Russian culture. Reference is made to the most prominent Russian musicologists' professional assessments and views of Komitas's academic achievements.

Archimandrite's professional activities in Etchmiadzin, the Transcaucasian region and Europe were widely covered by such renowned figures of Russian culture as T. Hartmann, N. Cherepnin, M. Gnessin, D. Maggid, V. Korganov and D. Shostakovich. The Russian-language press of Transcaucasia highly appreciated Komitas's musicological and educational activities; his publications were addressed by the press in St. Petersburg. The lecture concerts performed by Komitas in Tiflis and Baku had been an unprecedented success. Due to the thorough study and innovative coverage of these facts, the role and significance of Archimandrite Komitas in national culture are presented most comprehensively.

Key words – Archimandrite Komitas, music art, Russian art, musicologist, composer.